

ԲԱՆԱԿՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎՐԱՆՈՐՅՐԴԻ
ԼԵԶԱԲԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ընդհանուր դրույթներ

Արդի պայմաններում օտար լեզուների ուսուցումն ու ուսումնառությունը դառնում է կյանքի պահանջ. զարգանում են տնտեսական, մշակութային, քաղաքական և առևտրական կապերը, մեծանում է տեղաշարժը երկրից երկիր: Եվրոպական երկրները մեկ ընտանիք են դառնում, ընթանում է զլորալիզացիայի քաղաքականություն, իսկ առանց լեզվի իմացության, ըստ էության, հնարավոր չէ հաջողության հասնել: Կրթական բարեփոխումների պայմաններում անհրաժեշտություն է ծագում վերանայել լեզուների ուսուցման չափորոշիչները, ծրագրերն ու կրթության բովանդակությունը:

Եվրախորհրդի ժամանակակից լեզուների զարգացման ծրագրերի շրջանակներում ներկայացված նպատակները ուղղված են բազմալեզվության պայմաններում օտար լեզուների ուսումնասիրմանն ու դասավանդմանը: Ինչպես նշում է Ջոն Թրիմը «կրթական համատեքստում կարևոր է ոչ միայն որոշ մասնագիտական վարքի ձեռքբերումը, այլ նաև սովորողի կանոնավոր և խելացի զարգացումն ապահովելը, ինչպես նաև նրա ինքնադրսևորումը անձնական և հասարակական ոլորտում»:¹ Այսինքն, մշակելով օտար լեզուների ուսուցման նյութերը, ուշադրություն է դարձվում ոչ միայն սովորողների լեզվական կարողությունների, այլ նաև մտավոր ստեղծագործական զարգացման ուղիների վրա: Իհարկե, ուսումնական պլանների և ծրագրերի ստեղծման հարցում դժվար է գտնել մեկ միասնական մոտեցում: Բարեփոխումները կրթական համակարգում իրականացնելիս, անհրաժեշտ է նկատի ունենալ ազգային, տարածաշրջանային լեզվաքաղաքականության առանձնահատկությունները օտար լեզուների ուսուցման բարեփոխումների իրականացման գործում:

Լիարժեք ապրելու և իր պարտքն ու պատասխանատվությունը ժամանակակից աշխարհում ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է տիրապետել առնվազն մեկ օտար լեզվի: Ինչպես նշվում է Եվրախորհրդի լեզվաքաղաքականության փաստաթղթերում² դա նշանակում է. 1.երկխոսություն վարել այլախոս անձանց հետ, 2.օտար լեզվով ինֆորմացիա փնտրել, գտնել,

¹ John Trim "The aims of modern language study in schools" in: Foreign Language examinations, the 16+debate 1981-83 ed. A. Moys, SCLE Papers, London 1984.

² Objectifs de l'apprentissage des langues vivantes. Conseil de la coopération culturelle, Allemagne 1993.

3. տիրապետել փոխգործունեության մեխանիզմներին /interaction/, 4. ակտիվացնել կենցաղում օտար լեզվի կիրառումը:

Այս ամենը թույլ է տալիս մեծացնել անձի ինքնափստահությունը և հաղթահարել օտար միջավայրում ծագող դժվարությունները, մյուս կողմից մեկ օտար լեզվի իմացությունը թույլ կտա ավելի հեշտությամբ ինքնուրույնաբար այլ լեզուներ սովորել: Օտար լեզուների դասավանդումը դարձնում լեզվական հմտությունների ու հաղորդակցական կարողությունների ձեռքբերումից բացի, հետապնդում է նաև սովորողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական դրսևորման զարգացում, որը թույլ է տալիս ոչ միայն սեփական կարծիքը հայտնել, այլ նաև ունենալ քննադատական վերաբերմունք այս կամ այն երևույթի նկատմամբ: Նման նպատակների կարելի է հասնել ուսուցման բովանդակության խելացի ընտրությամբ, համապատասխան մանկավարժական և մեթոդական գործընթացների իրականացմամբ, նորովի տեղեկատվական միջոցների կիրառմամբ:

«Իրազեկություն» հասկացություն

Օտար լեզվի ասպարեզում հաղորդակցական ուղղվածության սկզբունքը չի նշանակում միայն երկու անձանց մտքերի բանավոր փոխանակում, այլև ներառում է փոխներգործուն խոսքային գործունեության բաղադրամասերի մի ամբողջություն: Այդ փոխներգործության կարողություններին հասնելու համար անհրաժեշտ է պարզաբանել «իրազեկություն» /compétence/ հասկացությունը: Եվրախորհրդի ժամանակակից լեզվաքաղաքականությունն արտահայտող գրականության մեջ նշվում են իրազեկության տարբեր տեսակները. լեզվաբանական /compétence linguistique/, հանրա-լեզվաբանական /compétence socio-linguistique/, խոսքային /compétence communicative/discursive/, ռազմավարական /compétence stratégique/, հասարակական-մշակութային /compétence socio-culturelle/, հասարակագիտական /compétence sociale/:

Այժմ դիտարկենք թվարկված իրազեկության տարբեր տեսակներից յուրաքանչյուրը: *Լեզվաբանական իրազեկություն* /compétence linguistique /

Լեզվական իրազեկությունը վերաբերվում է լեզվի համակարգի, այսինքն բառապաշարային, հնչյունաբանական, շարահյուսական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը: Տիրապետելով այդ իրազեկության տեսակին հնարավոր է կազմել իմաստալից մախաղասություններ: Ինչպես նշվում է Եվրախորհրդի լեզվաքաղաքականությանը վերաբերող փաստաթղթերի և նյութերի ժողովածուում³ «լեզվական իրազեկություն ասելով հասկանում ենք համապատասխան բառապաշարով, քերականորեն ճիշտ մախաղասություններ կազմելու և մեկնաբանելու կարողությունը»:

³ Les langues vivantes: apprendre, enseigner, évaluer. Strasbourg 1998.

Իրազեկության գաղափարը բավականաչափ փոխակերպման է ենթարկվել Զ. վան Էկի «Շեմային մակարդակը»⁴ աշխատության մեջ: Եթե մինչ այդ լեզվական իրազեկությունը դիտվում էր բառերի ու կառույցների տեսանկյունից, ապա այժմ առաջ է քաշվել ասույթի իմաստաբանությունից ելնող մեկ այլ մոտեցում: Ըստ այդ մոտեցման շեշտը դրվում է լեզվի իմաստային գործառական կողմի վրա՝ հաշվի առնելով խոսքում հաղորդակցական տարբեր խնդիրների լուծման եղանակները: Այսպիսով, լեզվական իրազեկությունը եղել և այսօր մնում է հաղորդակցական կարողության հիմքը:

Հանրա-լեզվաբանական իրազեկություն /compétence socio-linguistique/

Հաղորդակցվելու համար պետք է կարողանալ ոչ միայն իմաստալից նախադասություններ կառուցել և ուրիշի արտասանած նախադասությունների իմաստը հասկանալ, այլև մեկնաբանել լեզվական միջոցների գործածությունը տվյալ համատեքստում: Այնպիսի գործոնների գիտակցումը, ինչպիսիք են խոսակիցների միջև հաստատված հարաբերությունները, հաղորդակցական մտադրությունը, որոնցով պայմանավորվում է լեզվական ձևերի ընտրությունը: Արտահայտվելու ձևը բնորոշում է հանրա-լեզվաբանական իրազեկությունը: Հանրա-լեզվաբանական իրազեկությունը վերաբերում է լեզվական ձևերի միջև եղած հարաբերությունների նշանակություններին, նրանց իմաստին, որը տարբերվում է լեզվական իրազեկության պարունակած իմաստից: Եթե վերջինս հենվում է լեզվական նշանների միջև եղած կապի և նրանց պայմանական /խոսքաշարից դուրս/ նշանակության վրա, ապա հանրա-լեզվաբանական իրազեկությունը ծջգրտում է լեզվական նշանների և նրանց նշանակալի /signifié/ միջև եղած կապը խոսքաշարում կամ տվյալ իրադրությունում: Այս իրազեկության բաղկացուցիչ մասերից է «կազմված» հաղորդակցական մտադրության համապատասխան խոսքաշարում կիրառումը: Ըստ Hessische Rahmenrichtlinien⁵-ի փաստաթղթի արտահայտությունների ձևն ու բովանդակությունը բնորոշվում են իրադրության հետևյալ տարրերով. 1. խոսակիցների անձնական բնութագիր /տարիք, սեռ, ազգություն, մասնագիտություն/, 2. նրանց փոխհարաբերությունները, 3. զգացական վերաբերմունքը միմյանց նկատմամբ, 4. հաղորդակցության նպատակը, արտաքին պայմանները /երկիր, տեղանք, միջավայր, շարժում/, 5. տեքստի տեսակը /զեկուցում, բանավեճ, երկխոսություն .../: Առանց հստակորեն ծջգրտելու խոսքային մտադրությունը /intention/ հնարավոր չէ իրականացնել հաղորդակցությունը: Ոչ պակաս կարևոր է լեզվաբանական իրազեկությունը /compétence linguistique/, ինչպես նաև հաղորդակցության առարկան /objet/: Եթե խոսքային մտադրությունը անհա-

⁴ J. van Ek, The Threshold Level for modern language learning in schools, Conseil de l'Europe, Strasbourg, 1976, (publié en 1977 à Londres par Longman et à Groningue par Wotters-Noordhoff)

⁵ Rahmenrichtlinien, Sekundarstufe I, Neue sprachen, publ. Der Hessische Kultusminister, November 1980, Wiesbaden, ref. 50124, p. 11.

տական մեկնաբանություն է պահանջում, ապա հաղորդակցության առարկան ընկալվում է հաղորդակցական գործողությամբ իր ամբողջության մեջ:

Շատ կարևոր է թեման, որով պայմանավորվում է մասնավորապես հաղորդակցական գործողության բովանդակությունը, իսկ բովանդակության ձևի և կառուցվածքի վրա ազդում է տեքստերի տեսակը: Այսպիսով հաղորդակցական նպատակները մատնանշում են, թե *ինչու* և *ինչպես* կարող է սովորողը արտահայտել իր մտքերը և օգտվել լեզվից:

խոսքային իրազեկություն /compétence communicative/ discursive /

Հաղորդակցության գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար պետք է տիրապետել խոսքային իրազեկությանը: Խոսքային իրազեկություն ասելով հասկանում ենք հաղորդակցվելու կարողությունների զարգացում: Լայն իմաստով այդ հասկացությունը ներառում է «տեքստեր կազմելու և մեկնաբանելու համար համապատասխան ռազմավարությունների կիրառում»: Տեքստերը կարող են լինել տարբեր տեսակների. բանավոր - հրապարակային հայտարարություններ և ցուցանակներ, հրապարակային ճառ, դասախոսություն, ներկայացում, ցերեկույթներ, ընթերցումներ, սպորտային մեկնաբանություններ, նորությունների հեռարձակում, երկխոսություններ մարդկանց մեջ, հեռախոսային խոսակցություն, հարցազրույցներ:

գրավոր - գրույկներ. կազմված և բնօրինակ տեքստեր, ամսագրեր, թերթեր, ուղեցույցներ և ձեռնարկներ, դասագրքեր, կոմիկ սյուժեներ, գովազդային նյութեր, հայտարարություններ, հարցաթերթիկներ, անձնական նամակներ, գործնական նամակներ և այլն:

Այսպիսով, տեքստը լեզվի թե բանավոր, թե՝ գրավոր արտահայտություն է, որի միջոցով լեզուն կիրառողները/սովորողները ընկալում, արտահայտում կամ փոխանակում են տեղեկատվություն: Լինելով խոսքային գործունեության արդյունք տեքստերը կարող են հանդես գալ թե բանավոր, թե գրավոր ձևով: Տեքստերն ունեն տարբեր գործառնություններ և կիրառվում են տարբեր նպատակներով: Օրինակ, բանավոր հաղորդակցության ժամանակ սովորողը պետք է կարողանա. ա/ սկսել զրույցը, բ/ ընդհատել զրուցակցին, գ/ շարունակել զրույցը, դ/ լսարանի ուշադրությունը գրավել, ե/ խոսելու հնարավորություն տալ, զ/ որոշ պարզաբանումներ մտցնել, է/ հաստատել կամ մերժել միտքը, ը/ ճշտել տվյալները, թ/ իմաց տալ ընկալման դժվարության մասին, ժ/ բացատրություն/մեկնաբանություն պահանջել, ի/ վստահանալ խոսքային մտադրության ճիշտ ընկալման վերաբերյալ: Անշուշտ այդ նշված բոլոր կարողությունները չեն կարող լիովին կիրառվել տարրական դասարաններում, այնուամենայնիվ ա, բ, գ, ե կետերը ուշադրության են արժանի:

Ռազմավարություն / *stratégie* / - եվրախորհրդի փաստաթղթերում Քենըլը և Սվենյը⁶ նշում են ռազմավարական իրազեկության անհրաժեշտությունը, որի նպատակն է լեզվի ոչ լիակատար տիրապետումն ու հաղորդակցությունը ընդհատող պատճառի փոխհատուցումը: Լեզվական կողը մեր հաղորդակցական գործիքն է, սակայն ոչ ոք կատարյալ չի տիրապետում այն, անգամ իր մայրենի լեզվում: Ասույթի իմաստն ըմբռնելու նպատակով կամ մտքերն արտահայտելու համար սովորաբար կիրառում ենք տարբեր ռազմավարություններ, մասնավորապես. կրկնել սկիզբը, նոր նախադասության կառուցում, բառերի փոխարինում հոմանիշներով, մի բան նկարագրել, ցուցադրում, արտահայտվել ժեստերի և միմիկաների միջոցով, ստիպել զրուցակցին իրեն օգնություն ցուցաբերել – Pardon. Pourriez-vous répéter, s'il vous plaît? Excusez – moi, je ne comprends pas արտահայտություններով:

Սակայն փորձը ցույց է տալիս, որ ովքեր չեն տիրապետում ծանոթ այս ձևերին, գերադասում են լռել, քան «ռիսկի դիմելով» թույլ տալ սխալներ: Դրա հետևանքով հաղորդակցությունը կարող է չընթանալ: Օտար լեզուն կիրառելիս կարելի է դիմել այլ ռազմավարությունների: Ասենք. բառին ուրիշ հնչեղություն տալ, կատարել բառացի թարգմանություն, բառեր որոնել, մայրենի լեզվից որևէ փոխառություն անել և այլն: Այս առումով պետք է համոզուժողականություն ցուցաբերել սխալների նկատմամբ, չեշտը դնելով խոսքի բովանդակության վրա, ձգտելով վերացնել հոգեբանական խոչընդոտները:

Հասարակական-մշակութային իրազեկություն /compétence socio-culturelle/

Ի՞նչ է իրենից ներկայացնում հասարակական-մշակութային իրազեկությունը: Հասարակական մշակութային իրազեկությունը նպաստում է .

ուրիշի զգացմունքները հասկանալ ու զգալ, ապրումակցել,

ընդունել այլ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին իրենց ավանդույթներով, փոխհարաբերություններով, համոզմունքներով, ծիսական սովորություններով բացահայտելով նորը:

Գիտելիքների մեջ շեշտը դրվում է մշակութային գործոնի պատմության, աշխարհագրության, կրոնի, գրականության վրա: Այս նպատակով Լինդա Քրաուֆորդ-Լանջը և Դեյլ Լանջը առաջարկում են ուսուցումը /ուսումնառությունը/ միաձուլել «մշակույթին» և «լեզվին»:⁷ Այդ իսկ պատճառով նրանք գտնում են, որ պետք է առանձնացնել բանավեճային թեմաներ և պարզապես յուրացվելիք փաստեր, խթանել պարտադիր խորհելը, մտորելը, սովորողների

⁶ Objectifs de l'apprentissage des langues vivantes. Conseil de la coopération culturelle, Allemagne. 1993, p. 35.

⁷ Linda M. Crawford-Lange and Dale L. Lange "Doing the unthinkable in the Second-Language Classroom: A Process for the Integration of Language and Culture": Teaching for Proficiency, the Organizing Principle, ed Theodore V. Higgs, National Textbook Company, Lincolnwood 1984, p. 46.

հույզերը և արտահայտվելը: Անհրաժեշտ է նաև բազմաբնույթ մտածողության զարգացումը: Իհարկե, հասարակական-մշակութային իրազեկության ծեղրերում անբաժանելի է լեզվական իրազեկությունից: Իսկ ներկայացվող թեմաները և իրազեկության տեսակները պետք է առնչվեն սովորողի կենսափորձի և նրա շրջապատի հետ. տուն և ընտանիք, դպրոց և աշխատանք, ժամանց, սնունդ, հետաքրքրություններ և այլն:

Հասարակակազմի տական իրազեկություն /compétence sociale/

Հաղորդակցությունը հասարակական գործնություն է և դրա իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ցանկություն և համապատասխան ունակություններ ու կարողություններ: Ցանկություն կլինի միայն, եթե դրա համար դրդապատճառ կա: Հասարակակազմի տական իրազեկությունը սերտորեն կապված է հանրա-լեզվաբանական և խոսքային իրազեկությունների հետ, այն ի տարբերություն մյուսների պելի շատ հիմնվում է սովորողի անձի առանձնահատկությունների, քան լեզվի վրա: Հասարակակազմի տական իրազեկությունը ներառում է թե խոսքային գործունեության կանոնները և թե անձի բնավորության գծերը: Հաղորդակցման տեխնոլոգիան կարելի է սովորել, իսկ բնավորության գծերը ծնոք են բերվում և զարգացվում ամբողջ կյանքի ընթացքում: Օտար լեզվի ուսուցման տեխնոլոգիան իր տեղն է գտնում կիրառվող ռազմավարություններում: Օրինակ, սկզբնական փուլում սովորողը պետք է կարողանա. ողջունել և ասել իր անունը, ներկայանալ առանց խոսակցությունը շարունակելու կարողության, մի բան հաստատել կամ մերժել, պարզ հարցեր տալ՝ գրույց վարելու համար դիմելով օգնության:

Ուսումնական ռազմավարությունը հեշտացում է հասարակական փոխգործունեությունը, եթե համընկնում է անձնական գործոններին. դրդապատճառներ, վերաբերմունք, վստահություն: Հասարակակազմի տական իրազեկության զարգացմանը նպաստում են դերերով խաղերը, ընդօրինակումը, փոխակերպումը հաղորդակցական տարբեր իրադրություններում մինչ ինքնուրույն արտահայտությունների կառուցումը:

Այսպիսով, ուսուցման վաղ շրջանում օտար լեզվի մակարդակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ են նորովի մոտեցումներ կիրառել նկատի ունենալով մեր ազգային դպրոցի առանձնահատկությունները, չմոռանալով այն հարուստ ավանդույթները, որոնք դարեր ի վեր գոյություն ունեն, պահպանվում են և ներկայացնում են մեր ազգային բնութագիրը: Անշուշտ, վերը նշված դրույթները պետք է անցնեն փորձարարական փուլ և ներդրվեն ուսումնական գործընթացում: Իհարկե տարրական դասարաններում երաշխավորելու կամ մեթոդական ուղղություն տալու համար գուցե որոշ կողմեր կամ ամբողջ հայեցակարգը կշտկվեն, հաշվի առնելով հայ աշակերտների ազգային մտածելակերպը: Դա վերաբերում է ինչպես վերը նշված իրազեկությունների, այնպես էլ կիրառվող մեթոդների և ռազմավարության կիրառմանը: